Հաստատված է
ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔՐԵԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ամբիոնի 31.08.2020թ. նիստում (արձ. թիվ 1)
Ամբիոնի պետի ժ/պ _____ Հ.Խաչատրյան
31.08.2020թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		ՀՀ քրեակատարողական իրավունք
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն, վճարովի ուսուցում
ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոն E-mail: qreakan@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Դ.Թումասյան (ի.գ.թ., դոցենտ) E-mail: davidtumasyan@rambler.ru
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		3-րդ կուրս, 5-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		3 (երեք)
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		«ՀՀ քրեակատարողական իրավունք» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունք, 42 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում քննություն հանձնելով:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է «Քրեական իրավունք» դասընթացի իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«ՀՀ քրեակատարողական իրավունք» դասընթացը բաղկացած է ընդհանուր և հատուկ մասերից: Ընդհանուր մասում ներառված թեմաները բացահայտում են քրեակատարողական իրավունքի ընդհանուր դրույթներն ու հասկացությունները, դատապարտյալների իրավական վիճակը, պատիժ իրականացնող մարմինների ու հիմնարկների համակարգը, դրանց նկատմամբ իրականացվող հսկողությունն ու վերահսկողությունը, ինչպես նաև դատապարտյալների ուղղումը, իսկ հատուկ մասում ներառված թեմաները՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված առանձին պատժատեսակների կատարման կարգն ու պայմանները, ինչպես նաև պատժից ազատելու կարգն ու պայմանները:

ՆՊԱՏԱԿ ԽՆԴԻՐ/ՆԵՐ		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ պատիժների կատարման կարգի և պայմանների, ինչպես նաև պատժից ազատելու կարգի և պայմանների վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ • ներկայացնել քրեակատարողական իրավունքի սկզբունքներն ու նպատակները, • ուսումնասիրել պատիժ իրականացնող մարմինների և հիմնարկների համակարգը, նրանց նկատմամբ հսկողությունն ու վերահսկողությունը, • ներկայացնել դատապարտյալների իրավական վիճակը ՀՀ-ում, • ուսումնասիրել և վերլուծել դատապարտյալների ուղղման գործընթացը ՀՀ-ում, • ներկայացնել ազատություն զրկելու հետ չկապված պատիժների կատարման կարգն ու պայմանները, դրանց առանձնահատկությունները, • ներկայացնել կալանքի և կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժների կատարման կարգն ու պայմանները, դրանց առանձնահատկությունները, • ներկայացնել ուղղիչ հիմնարկի կանոնակարգը, • ներկայացնել ազատազրկման կատարման առանձնահատկությունները տարբեր տեսակի ուղղիչ հիմնարկներում, • վերլուծել պատժից ազատելու կարգն ու պայմանները:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ *Կարողանա՝*		1. ներկայացնել ազատազրկումը որպես պատժատեսակ, ազատությունից զրկելու հարկադրանքի այլ միջոցները և տարբերել իրարից, 2. ուրվագծել պատժի կատարմանը վերաբերող ազգային իրավական ակտերը, 3. մեկնաբանել տարբեր տեսակի պատիժների իրականացման կարգն ու պայմանները, 4. ուրվագծել դատապարտյալների իրավունքներն ու պարտականությունները, 5. պարզաբանել ազատազրկման կրման առանձնահատկությունները, 6. մատնանշել պատժից ազատելու կարգն ու պայմանները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		***<u>ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ</u>*** 1. Հայաստանի Հանրապետության սահմանադրություն 2. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրք 3. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք 4. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք 5. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք 6. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք 7. Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրք 8. Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի օրենքը

		“Քրեակատարողական ծառայության մասին” 9. Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 6-ի օրենքը “Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին” 10. Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 22-ի օրենքը “Դատախազության մասին” 11. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի օրենքը “Դատական ակտերի հարկադիր կատարման մասին” 12. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 17-ի օրենքը “Պրոբացիայի մասին” 13. Հայաստանի Հանրապետության Նախագահի 2006թ.-ի հուլիսի 31-ի հրամանագիրը “Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովների կազմավորման և գործունեության կարգը սահմանելու մասին” 14. Հայաստանի Հանրապետության Նախագահի 2003 թ.-ի նոյեմբերի 19-ի հրամանագիրը “Դատապարտյալների ներման խնդրագրերը քննարկելու կարգը հաստատելու մասին” 15. Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշում 24 օգոստոսի 2006 թվականի N 1304-Ն “Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի կողմից քննարկման կարգը հաստատելու մասին” 16. Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշում 3 օգոստոսի 2006 թվականի N1543-Ն “Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին” 17. Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշում 26 մայիսի 2006 թվականի N825-Ն “Կալանավորված անձանց ու դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին” 18. Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշում 7 հուլիսի 2005 թվականի N960-Ն “Կալանավորված անձանց ու դատապարտյալներին արգելված աշխատանքների և պաշտոնների ցանկը հաստատելու մասին” 19. Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշում 7 հոկտեմբերի 2004 թվականի N 1457-Ն “Ազատազրկման վայրերում գտնվող ազատազրկվածին կենսաթոշակ նշանակելու, վճարելու և նրան հաշմանդամ ճանաչելու կարգը հաստատելու մասին” 20. Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշում 10 ապրիլի 2003 թվականի N413-Ն “Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները հաստատելու մասին” 21. ՀՀ Արդարադատության նախարարի 30 մայիսի 2008 թվականի N 44-Ն հրաման “Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության”կարգը հաստատելու մասին”

22. ՀՀ Արդարադատության նախարարի 27 մայիսի 2008 թվականի N 41-Ն հրաման “Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների տեսակները, լրակազմը, ինչպես նաև կալանավորվածների և դատապարտյալների համար մեկ անձի հաշվարկով բնակելի տարածքները սահմանելու մասին”
23. ՀՀ Արդարադատության նախարարի 4 հուլիսի 2007 թվականի N 148-Ն հրաման “Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրեր և ուղղիչ հիմնարկներ անձանց մուտքի և ելքի կարգը հաստատելու մասին”
24. ՀՀ Արդարադատության նախարարի 18 նոյեմբերի 2005 թվականի թիվ ՔՀ-66-Ն հրաման
“Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում ու մարմիններում վերահսկողության իրականացման կարգը և հասարակական դիտորդների խմբի կազմը սահմանելու մասին”

25. ՀՀ Արդարադատության նախարարի 21 ապրիլի 2005 թվականի թիվ ՔՀ-26-Ն հրաման “Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում տեղաբաշխման հանձնաժողով ստեղծելու և դրա գործունեության կարգը հաստատելու մասին”
26. ՀՀ Արդարադատության նախարարի 10 փետրվարի 2005 թվականի թիվ ՔՀ 15-Ն հրաման
“Որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պայմանագրային հիմունքներով տեխնիկատնտեսական սպասարկման և այլ աշխատանքներ կատարելուն ներգրավելու մասին”

27. ՀՀ Արդարադատության նախարարի 27 դեկտեմբերի 2004 թվականի N ՔՀ - 60-Ն հրաման“Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալներին և կալանավորված անձանց տրվող սննդի հատկացման ճաշացուցակի, սննդի պահեստից դուրս գրման կաթսայի օրդերին և սննդի հսկողության “Ճաշերի պատրաստման քանակի և որակի հսկողության մատյանի” ձևերը հաստատելու մասին”
28. Անչափահասների գործերով արդարադատության ոլորտի միջազգային փաստաթղթերի ժողովածու, Երևան, 2012, 256 էջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամբիոնի կողմից մշակված դասախոսությունները
2. Արզումանյան Ս., Գրին Է. Իրավաբանական հոգեբանություն: Երևան, Զանգակ-97, 2004, 432 էջ:
3. Առաքելյան Ս. Վ. Կանանց իրավական պաշտպանությունը բռնությունից: Երևան, 2001, 168 էջ:
4. Թումասյան Դ. ՀՀ քրեակատարողական իրավունք: Ուսումնամեթոդական ձեռնարկ , Երևան, Լիմուշ, 2013, 131 էջ:
5. Խալափյան Թ. Դիտարկումներ կալանավայրում: Ձեռնարկ հասարակական դիտորդների համար: Երևան, 2006, 158 էջ:
6. Խաչիկյան Հ.Մ. ՀՀ քրեակատարողական իրավունք: Երևան, ԵՊՀ հրատարակություն, 2009, 352 էջ:

		7. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Երևան, ԵՊՀ հրատ., 2007, 544 էջ: 8. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսդրության համապատասխանելիությունը մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշներին: Զեկույց: Երևան, 2011, 60 էջ: 9. Նալչաջյան Ա.Ա. Սոցիալական հոգեբանություն: Երևան, 2004, 432 էջ:
Լրացուցիչ		1. Բանտարկյալների հետ վարվեցողության 1955 թվականի օգոստոսի 30-ի նվազագույն ստանդարտ կանոններ 2. Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց վարվելակերպի 1979 թվականի դեկտեմբերի 17-ի կանոնագիրք 3. ՄԱԿ-ի 1984թ.-ի դեկտեմբերի 10-ի Կոնվենցիա խոշտանգումների և դաժան,անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ (տանջանքների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի տեսակների դեմ) 4. Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ Կոնվենցիայի կամընտիր արձանագրություն 5. ՄԱԿ-ի 1985 թ.-ի նոյեմբերի 29-ի նվազագույն ստանդարտ կանոնները “Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ” (“Պեկինյան կանոններ”) 6. Бекузаров Г. О., Селивестров В. И. Уголовно-исполнительное право России. М.: “Юрист”, 1998. 7. Зубкова А.И., Коминин Ю.И., Сысоев В.Д. Пенитенциарные учреждения в системе Министерства юстиции России/ Под ред. С.В. Степашина и П.В. Крашенникова. М.: “Инфра-Норма М”, 1998. 8. Игнатьев А. А. Уголовно-исполнительное право. М.: “Новый юрист”, 1997. 9. Рябин А. А. Основы исправительно-трудового (уголовно-исполнительного) права. Вопросы дифференциации и индивидуализации наказания. М., 1995. 10. Стуканов А.П. Побеги из тюрем и колоний России. Санкт-Петербург: “Юридический центр Пресс”, 2006. 11. Уголовно-исполнительное право/ Под ред. проф. В. И. Селивестрова. М., 2001. 12. Уголовно-исполнительное право России/ Под ред. проф. А. И. Зубкова. М.: “Инфра-М-Норма”, 1997. 13. Уголовно-исполнительное право/ Под ред. П. Г. Пономарева. М.: “Новый юрист”, 1998. 14. Уголовно-исполнительное право/ Под ред. проф. И. В. Шмарова. М.: “Бек”, 1998. 15. Уткин В. А. Международные стандарты обращения с осужденными и проблемы их реализации. Томск, 1998. 16. Федореев П.Р. Отрицательно характеризующиеся осужденные в местах лишения свободы. М.: “Юрист”, 2006. 17. Хачикян А.М. Лишение свободы: проблемы осуществления наказания в отношении впервые осужденных. Ер.: “Тигран Мец”, 2000. 18. Хачикян А.М. История применения и правового регулирования наказания в виде лишения свободы. Ер.: Издательство Ереванского государственного университета, 2005. 19. Хачикян А.М. Лишение свободы: криминологические и уголовно-исполнительные проблемы. Ер.: Издательство Ереванского государственного университета, 2008.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ	Բաղադրիչ 1- 20% (Միջանկյալ 1) Բաղադրիչ 2- 20% (Միջանկյալ 2) Բաղադրիչ 3- 60% (ամփոփիչ քննություն)
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ	

Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով		
18-20	Գերազանց	Միջանկյալ գնահատման միավոր	
13-17	Լավ	Հարց 1	Հարց 2
8-12	Բավարար	2 միա□որ	2 միավոր
0-7	Անբավարար		
0	Չներկայացած		

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (20 միավոր) առաջադիմություն: Առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է սովորողի միջանկյալ և ամփոփիչ քննությունների գնահատականների հանրագումարի արդյունքում: Գնահատումը կատարվում է վերոնշյալ բաղադրիչների հիման վրա: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:

ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ներկայություն **Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ** **Ինքնուրույն և գործնական աշխատանքներ**		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:
		Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
		Ինքնուրույն աշխատանքներն անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրն ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 **Քրեակատարողական իրավունքի հասկացությունը, առարկան և համակարգը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քրեակատարողական իրավունքի առարկան: 2. Քրեակատարողական իրավունքի հասկացությունը ու նրա տեղը իրավական համակարգում: 3. Քրեակատարողական իրավունքի խնդիրները և նպատակները, դրա նշանակությունը հասարակության և պետության համար: 4. Քրեակատարողական իրավունքի սկզբունքները (ընդհանուր և հատուկ): 5. Քրեակատարողական իրավունքի տեղը ՀՀ իրավական համակարգի մեջ, նրա կապը այլ առարկաների հետ:	Հարցեր 1-5 – ներկայացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա: Հարց 3 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են քրեակատարողական իրավունքի խնդիրների և նպատակների հետ, այնուհետև դասախոսին են ներկայացնում դրանց մեկնաբանությունները: Հարցեր 1-5 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են քրեակատարողական իրավունքի սկզբունքները, խնդիրներն ու նպատակները, կատարվում է դրանց խմբային քննարկում:

Թեմա 2 **ՀՀ քրեակատարողական օրենսդրությունը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քրեակատարողական օրենսդրության հասկացությունը, բովանդակությունն ու կառուցվածքը: 2. Պատժի կատարմանը վերաբերվող իրավական ակտեր, ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, միջազգային ակտեր: 3. Քրեակատարողական իրավունքի նորմերի կառուցվածքն ու տեսակները, դրանց առանձնահատկությունները: 4. Քրեակատարողական իրավունքի գործողությունը ժամանակի ընթացքում ու տարածության մեջ: 5. Քրեակատարողական իրավահարաբերությունների հասկացությունը, կառուցվածքը ու տեսակները:	Հարցեր 1-5 – ներկայացվում է դասախոսություն ՀՀ քրեակատարողական օրենսդրության վերաբերյալ: Հարցեր 1-5 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար և պատրաստվում են սեմինար պարապմունքին՝ ՀՀ քրեակատարողական օրենսդրության բովանդակության և կառուցվածքի վերաբերյալ: Հարցեր 1-5 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են քրեակատարողական իրավունքի նորմերի կառուցվածքն ու տեսակները, քրեակատարողական իրավունքի գործողությունը ժամանակի ընթացքում ու տարածության մեջ, կատարվում է դրանց խմբային քննարկում:

Թեմա 3 **Դատապարտյալների իրավական վիճակը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**

Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Դատապարտյալների իրավական վիճակի հասկացությունը, դրա նշանակությունը ու բովանդակությունը: 2. Դատապարտյալների իրավունքներն ու պարտականությունները: 3. Տարբեր տեսակի պատիժներ կրող դատապարտյալների իրավունքների ու պարտականությունների բովանդակությունը, նրանց կարգավիճակը:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Դասախոսը ներկայացնում է դատապարտյալների իրավունքներն ու պարտականությունները, ներկայացնում դրա վերաբերյալ իրավիճակային խնդիր, որից հետո սովորողները բաժանվում են խմբերի և խմբերով քննարկում տվյալ իրավունքներն ու պարտականությունները: Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք: Սովորողներն ուսումնասիրում են քննարկված նյութը, և ըստ խմբերին նախապես տրված հանձնարարության դասախոսին ներկայացնում դատապարտյալների իրավունքների ու պարտականությունների իրականացման առանձնահատկությունները: Հարցեր 1-3 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են դատապարտյալների իրավական վիճակի հասկացությունը, դատապարտյալների իրավունքներն ու պարտականությունները, կատարվում է դրանց խմբային քննարկում:

Թեմա 4 Պատիժ իրականացնող մարմիններն ու հիմնարկները և դրանց գործունեության հսկողությունն ու վերահսկողությունը (4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Պատիժ իրականացնող մարմինների ու հիմնարկների համակարգը: 2. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության համակարգը: Այդ համակարգում աշխատող անձանց ներկայացվող պահանջները: 3. Դատական ու գերատեսչական վերահսկողությունը: 4. Պատիժ իրականացնող մարմինների ու հիմնարկների գործունեության օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը: 5. Հասարակական դիտորդների ինստիտուտը ՀՀ-ում: Հասարակական վերահսկողություն:	Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն, որի ընթացքում ներկայացվում են պատիժ իրականացնող մարմիններն ու հիմնարկները, անցկացվում դրանց համեմատություն: Այնուհետև խմբային քննարկման միջոցով ի հայտ են բերվում այդ մարմինների և հիմնարկների նկատմամբ իրականացվող վերահսկողությունն ու հսկողությունը՝ ներկայացնելով դրանց շրջանակն ու առանձնահատկությունները: Հարցեր 1-5 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, այդ թվում՝ պատիժ իրականացնող մարմինների ու հիմնարկների համակարգին և դրա նկատմամբ իրականացվող հսկողությանն ու վերահսկողությանը: Հարցեր 1-5 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են պատիժ իրականացնող մարմինների ու հիմնարկների համակարգը, մեկնաբանում դրանց առանձնահատկությունները, ներկայացնում հիմնարկների և մարմինների նկատմամբ

	իրականացվող հսկողությունն ու վերահսկողությունը, կատարվում է դրանց խմբային քննարկում:

Թեմա 5 Դատապարտյալի ուղղումը ու դրան հասնելու հիմնական միջոցները (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Դատապարտյալի ուղղման հասկացությունը և հիմնական միջոցները: 2. Պատժի կամ ուղղիչ հիմնարկի տեսակի, դաստիարակչական աշխատանքների, հանրօգուտ աշխատանքի, կրթության և հասարակության դերն ու նշանակությունը դատապարտյալների ուղղման հարցում: 3. Հոգեբանների գործունեությունը և նրանց դերը դատապարտյալների ուղղման հարցում:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն, որին ներկայացվում է դատապարտյալի ուղղման հասկացությունը՝ շեշտադրելով հոգեբանի դերակատարմանն այդ գործընթացում: Այնուհետև խմբային քննարկման միջոցով ի հայտ են բերվում դատապարտյալի և հոգեբանի շփման առանձնահատկությունները: Հարցեր 1-3 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, և դրանց վերլուծության արդյունքները ներկայացվում են դասախոսին:

Թեմա 6 Ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ընդհանուր սկզբունքները: 2. Տուգանքի կատարման պայմաններն ու կարգը: 3. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու կատարման պայմաններն ու կարգը: 4. Հանրային աշխատանքների կատարման պայմաններն ու կարգը: 5. Հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելու կատարման պայմաններն ու կարգը: 6. Գույքի բռնագրավման կատարման պայմաններն ու կարգը:	Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն, որի ընթացքում ներկայացվում են ազատությունից զրկելու հետ չկապված 5 պատժատեսակների կատարման կարգն ու պայմանները՝ մանրամասնելով յուրաքանչյուր պատժատեսակի կատարման ընթացակարգային առանձնահատկությունները: Հարցեր 1-6 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, այդ թվում՝ ՀՀ իրավական ակտերին, և դրանց վերլուծության արդյունքները ներկայացվում են դասախոսին: Հարցեր 1-6 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են ազատությունից զրկելու հետ չկապված 5 պատժատեսակների կատարման կարգն ու պայմանները, կատարվում է դրանց խմբային քննարկում:

Թեմա 7 Կարգապահական գումարտակում պահելու կատարման կարգն ու պայմանները (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Կարգապահական գումարտակում պահելու կատարման ընդհանուր պայմաններն ու կարգը:	Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն, որին ներկայացվում է կարգապահական

2. Դատապարտյալների կապն արտաքին աշխարհի հետ, նրանց նկատմամբ կիրառվող խրախուսանքի և տույժի միջոցները: 3. Դատապարտյալների նյութակենցաղային և բուժսանիտարական ապահովումը: 4. Կարգապահական գումարտակում պահելու ընթացքում կիրառվող տույժերն ու խրախուսանքները:	գումարտակում պահելու ձևով պատժի կատարման կարգն ու առանձնահատկությունները: Այնուհետև խմբային քննարկման միջոցով ի հայտ են բերվում այդ պատժի կատարման ընթացքում առաջացող խնդիրները և դրանց լուծումները: Հարցեր 1-4 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, այդ թվում՝ խնդրո առարկային վերաբերող՝ ՀՀ կառավարության որոշմանը, և դրանց վերլուծության արդյունքները ներկայացվում են դասախոսին:

Թեմա 8 **Կալանքի կատարման կարգն ու պայմանները** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Կալանքի կատարման ընդհանուր պայմաններն ու կարգը: 2. Կալանքի կատարման կարգի ու պայմանների առանձնահատկությունները զինծառայողների նկատմամբ: 3. Դատապարտյալների կապն արտաքին աշխարհի հետ: 4. Դատապարտյալների նյութակենցաղային և բուժսանիտարական ապահովումը: 5. Կալանքի ընթացքում կիրառվող տույժերն ու խրախուսանքները:	Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն, որին ներկայացվում է կալանքի կատարման կարգն ու առանձնահատկությունները: Այնուհետև խմբային քննարկման միջոցով ի հայտ են բերվում այդ պատժի կատարման ընթացքում առաջացող խնդիրները և դրանց լուծումները: Հարցեր 1-5 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, և դրանց վերլուծության արդյունքները ներկայացվում են դասախոսին:

Թեմա 9 **Ազատազրկման կատարման ընդհանոր կարգն ու պայմանները** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ազատազրկման կատարման ընդհանուր հասկացությունը: 2. Դատապարտյալի տեղաբաշխումը, տեղափոխումը, ուղղիչ հիմնարկ դատապարտյալի ընդունումը: 3. Տեղաբաշխիչ հանձնաժողովի գործունեության կարգն ու պայմանները: 4. Դատապարտյալների բաշխումն ուղղիչ հիմնարկներում:	Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն, որին ընդհանուր ներկայացնում է ազատազրկման կատաարման կարգը, դատապարտյալի տեղափոխումն ու ընդունումը: Այնուհետև մանրամասն ներկայացվում է տեղաբաշխիչ հանձնաժողովի գործունեության կարգն ու պայմանները: Հարցեր 1-4 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, և դրանց վերլուծության արդյունքները ներկայացվում են դասախոսին: Հարցեր 1-4 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են ազատազրկման կատարման վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, դատապարտյալի տեղաբաշխումը, տեղափոխումը, ուղղիչ հիմնարկ դատապարտյալի ընդունումը, կատարվում է դրանց խմբային քննարկում:

Թեմա 10 Ուղղիչ հիմնարկների կանոնակարգն ու դրա ապահովման միջոցները (4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ուղղիչ հիմնարկի կանոնակարգի հասկացությունը ու դրան ներկայացվող հիմնական պահանջները: 2. ՈՒղղիչ հիմնարկներում ներքին կանոնակարգը: 3. Կանոնակարգի ապահովման միջոցներն ու մեթոդները: 4. Ազատազրկման դատապարտված անձանց պատիժ կրելու պայմանները, սննդի ու առաջին անհրաժեշտության պարագաների ձեռքբերման կարգը: 5. Նամակների, հեռախոսազրույցների, գումարային փոխանցումների ու հանձնումի ստացման կարգը: 6. Դատապարտյալների կապն արտաքին աշխարհի հետ: 7. Դատապարտյալների նյութակենցաղային և բուժսանիտարական ապահովումը: 8. Տեսակցությունների կազմակերպման կարգը քրեակատարողական հիմնարկում: 9. Կանոնակարգի ապահովման այլ պայմաններ: 10. Ուղղիչ հիմնարկի կանոնակարգն արտակարգ իրավիճակներում: 11. Ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ կիրառվող խրախուսանքի և տույժի միջոցները:	Հարցեր 1-11 - անցկացվում է դասախոսություն, որին ներկայացվում է ուղղիչ հիմնարկի կանոնակարգը, դրան ներկայացվող հիմնական պահանջները, ինչպես նաև կանոնակարգի ապահովման պայմանները: Այնուհետև խմբային քննարկման միջոցով ի հայտ են բերվում կանոնակարգի ապահովման հնարավոր եղանակներն ուղղիչ հիմնարկում: Քննարկվում են իրավիճակներ՝ տույժի և խրախուսանքի միջոցներ կիրառելու հիմք հանդիսանալու տեսանկյունից: Հարցեր 1-11 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են ուղղիչ հիմնարկի կանոնակարգին, դրան ներկայացվող հիմնական պահանջներին, այդ թվում՝ խնդրո առարկային վերաբերող՝ ՀՀ կառավարության որոշմանը, և վերլուծության արդյունքները ներկայացվում են դասախոսին: Հարցեր 1-11 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են ուղղիչ հիմնարկի կանոնակարգը, դրան ներկայացվող հիմնական պահանջները, կանոնակարգի ապահովման պայմանները, կատարվում է դրանց խմբային քննարկում:

Թեմա 11 Դատապարտյալների աշխատանքն ու կրթությունը, մասնակցությունն ինքնագործ միավորումներին (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Դատապարտյալների հետ տարվող աշխատանքների խնդիրները, հիմնական ձևերն ու մեթոդները: 2. Դատապարտյալների ինքնագործ միավորումները: 3. Դատապարտյալների աշխատանքի սոցիալական, իրավական ու դաստիարակչական ֆունկցիան: Աշխատանքի ձևերն ու իրականացման կարգը: Աշխատանքի իրավական կարգավորումը: 4. Դատապարտյալների կրթությունը: Դատապարտյալների մասնագիտական կրթության կազմակերպումը: Բուհական և հետբուհական կրթության կազմակերպումը:	Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն, որին ներկայացվում են դատապարտյալների աշխատանքն ու կրթությունը, նրանց մասնակցությունն ինքնագործ միավորումներին: Այնուհետև խմբային քննարկման միջոցով ի հայտ են բերվում այդ միջոցառումների իրականացման տեսակները, դասախոսը ներկայացնում է դրանց իրագործման առանձնահատկությունները: Հարցեր 1-4 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, և դրանց վերլուծության արդյունքները ներկայացվում են դասախոսին:

Թեմա 12 Տարբեր տեսակի ուղղիչ հիմնարկներում պատժի կատարման առանձնահատկությունները

(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ուղղիչ հիմնարկների դասակարգումը, տարբեր տեսակի ուղղիչ հիմնարկներում պատիժ կրելու պայմանները: 2. Բաց ուղղիչ հիմնարկ: 3. Կիսաբաց ուղղիչ հիմնարկ: 4. Կիսափակ ուղղիչ հիմնարկ: 5. Փակ ուղղիչ հիմնարկ: 6. Բուժական ուղղիչ հիմնարկ: 7. Ցմահ ազատազրկման կատարման առանձնահատկությունները: 8. Անչափահաս դատապարտյալների պատիժը կրելու առանձնահատկությունները: 9. Կին դատապարտյալների պատիժը կրելու առանձնահատկությունները:	Հարցեր 1-9 - անցկացվում է դասախոսություն, որին ներկայացվում է ուղղիչ հիմնարկների՝ պատժի կրման պայմանների առանձնահատկությունները: համեմատական վերլուծության միջոցով ներկայացվում են 5 տեսակի ուղղիչ հիմնարկների պայմանները: Այնուհետև խմբային քննարկման միջոցով ի հայտ են ցմահ ազատազրկման, կին և անչափահաս դատապարտյալների պատիժը կրելու առանձնահատկությունները: Հարցեր 1-9 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, այդ թվում՝ խնդրո առարկային վերաբերող՝ ՀՀ կառավարության որոշումներին, և դրանց վերլուծության արդյունքները ներկայացվում են դասախոսին: Հարցեր 1-9 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են 5 տեսակի ուղղիչ հիմնարկների պայմանները, ինչպես նաև ցմահ ազատազրկման, կին և անչափահաս դատապարտյալների պատիժը կրելու առանձնահատկությունները, կատարվում է դրանց խմբային քննարկում:

Թեմա 13 **Պատժից ազատելը և պատժից ազատվող անձանց ցուցաբերվող օգնությունը** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Պատժից ազատելու սոցիալական նշանակությունն ու դրա իրավական հետևանքները: 2. Պատժից ազատելու կարգն ու հիմունքները: 3. Պատժից ազատվող անձանց նախապատրաստումը: 4. Սոցիալական հարմարեցում /ադապտացիա/: Պատժից ազատվող անձանց ցուցաբերվող օժանդակությունը: 5. Վերահսկողությունը պատիժը պայմանականորեն չկիրառելու և պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքում:	Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն, որին ներկայացնում է պատժից ազատելու հիմքերն ու կարգը, պատժից ազատվող անձանց ցուցաբերվող օգնությունը: Այնուհետև խմբային քննարկման միջոցով ներկայացվում է պատժից ազատվող անձանց նախապատրաստման ընթացքը, դասախոսը ներկայացնում է դրանց լուծման կանոնները: Հարցեր 1-5 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, և դրանց վերլուծության արդյունքները ներկայացվում են դասախոսին:

Թեմա 14 **Պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կատարումը** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կատարման ընդհանուր կարգն ու պայմանները:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն, որին ամփոփ ներկայացնում է պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի

2. Դատապարտյալի նկատմամն կիրառվող բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կատարումն ուղղիչ հիմնարկում: 3. Պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կատարման ժամկետի հաշվարկումը և դրանից ազատելը:	հարկադրանքի միջոցների կատարման ընդհանուր կարգն ու պայմանները: Այնուհետև խմբային քննարկման միջոցով ի հայտ են բերվում պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներից ազատելու առանձնահատկությունները: Հարցեր 1-3 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, և դրանց վերլուծության արդյունքները ներկայացվում են դասախոսին:

Հարցաշար

«Քրեակատարողական իրավունք» առարկայի առաջին միջանկյալ քննության

1. Քրեակատարողական իրավունքը, նրա խնդիրներն ու նպատակները
2. Քրեակատարողակն իրավունքի սկզբունքները
3. Քրեակատարողական օրենսդրության կառուցվածքն ու բովանդակությունը
4. Դատապարտյալների հիմնական իրավունքներն ու պարտականությունները
5. Պատիժ իրականացնող մարմիններն ու հիմնարկները
6. Պատիժ իրականացնող մարմինների ու հիմնարկների գործունեության նկատմամբ հսկողությունը, վերահսկողությունն ու դրա տեսակները
7. Պատիժ իրականացնող մարմինների ու հիմնարկների նկատմամբ դատախազական հսկողությունը
8. Հասարակական վերահսկողությունը պատիժ իրականացնող մարմինների ու հիմնարկների նկատմամբ
9. Դատական և գերատեսչական վերահսկողություն
10. Դատապարտյալների ուղղումն ու դրա հիմնական միջոցները

Հարցաշար

«Քրեակատարողական իրավունք» առարկայի երկրորդ միջանկյալ քննության

1. Տուգանքի կատարման պայմաններն ու կարգը
2. Հանրային աշխատանքների կատարման պայմաններն ու կարգը
3. Գույքի բռնագրավման կատարման պայմաններն ու կարգը
4. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու կատարման պայմաններն ու կարգը
5. Հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելու կատարման պայմաններն ու կարգը
6. Կարգապահական գումարտակում պահելու կատարման պայմաններն ու կարգը
7. Ազատազրկման ձևով պատժի կրման ընդհանուր պայմանները
8. Ազատազրկման դատապարտված անձանց անջատ պահելու հիմքերը
9. Ազատազրկման դատապարտված անձանց տեղափոխումը (փոխադրումը)
10. ՈՒղղիչ հիմնարկներում կանոնակարգն ու դրան ներկայացվող հիմնական պահանջները
11. ՈՒղղիչ հիմնարկներում կանոնակարգն արտակարգ իրավիճակներում
12. Դատապարտյաների ինքնուրույն միավորումները
13. Դատապարտյալների կապն արտաքին աշխարհի և ընտանիքի հետ
14. Ազատազրկման վայրերում աշխատանքի կազմակերպման սկզբունքները ու ձևերը

Հարցաշար

«Քրեակատարողական իրավունք» առարկայի կիսամյկային քննության

1. ՀՀ քրեակատարողական իրավունքը, նրա առարկան
2. ՀՀ քրեակատարողական իրավունքի խնդիրներն ու նպատակները
3. ՀՀ քրեակատարողական իրավունքի սկզբունքները
4. ՀՀ քրեակատարողական իրավունքի աղբյուրները
5. ՀՀ քրեակատարողական իրավունքի կապն իրավունքի այլ ճյուղերի հետ
6. ՀՀ քրեակատարողական օրենսդրության ընդհանուր բնութագիրը
7. ՀՀ քրեակատարողական օրենսդրության նրա նպատակները ու խնդիրները
8. ՀՀ քրեակատարողական օրենսդրության կառուցվածքն ու բովանդակությունը
9. Դատապարտյալների իրավական վիճակը ու դրա բովանդակությունը
10. Դատապարտյալների հիմնական իրավունքները
11. Դատապարտյալների պարտականությունները

12. Պատիժ իրականացնող մարմիններն ու հիմնարկները
13. Պատիժ իրականացնող մարմինների ու հիմնարկների նկատմամբ հսկողությունը, վերահսկողությունն ու դրա տեսակները
14. Դատական և գերատեսչական վերահսկողություն
15. Հասարակության վերահսկողությունը: Հասարակական դիտորդներ
16. Դատախազական հսկողությունը
17. Դատապարտյալների ուղղումն ու դրա արդյունավետությունը
18. Դատապարտյալների ուղղման համար անհրաժեշտ միջոցները
19. Տուգանքի կատարման պայմաններն ու կարգը
20. Տուգանքը վճարելու անհնարինությունը և դրա հետևանքները
21. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու կատարման պայմաններն ու կարգը
22. Հանրային աշխատանքների կատարման պայմաններն ու կարգը
23. Հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելու կատարման պայմաններն ու կարգը
24. Գույքի բռնագրավման կատարման պայմաններն ու կարգը
25. Բռնագրավման ոչ ենթակա գույքը
26. Կալանքի կատարման պայմաններն ու կարգը
27. Կարգապահական գումարտակում պահելու կատարմանւ պայմաններն ու կարգը
28. Ազատազրկման ձևով պատժի կրման ընդհանուր պայմանները
29. Ազատազրկման դատապարտված անձանց անջատ պահելու հիմքերը
30. Ազատազրկման դատապարտված անձանց տեղափոխումը (փոխադրումը)
31. Դատապարտյալի ընդունումն ուղղիչ հիմնարկում
32. ՈՒղղիչ հիմնարկներում կանոնակարգն ու դրա ապահովման միջոցները
33. ՈՒղղիչ հիմնարկներում կանոնակարգն արտակարգ իրավիճակներում
34. Դատապարտյաների ինքնուրույն միավորումները
35. Դատապարտյալների կապն արտաքին աշխարհի և ընտանիքի հետ
36. Ազատազրկման վայրերում աշխատանքի կազմակերպման սկզբունքները ու ձևերը
37. Ազատազրկման վայրերում դատապարտյալների կրթությունը
38. Դատապարտյալների նյութակենցաղային ապահովումը
39. Պատժի իրականացումը բաց ուղղիչ հիմնարկում
40. Պատժի իրականացումը կիսաբաց ուղղիչ հիմնարկում
41. Պատժի իրականացումը կիսափակ ուղղիչ հիմնարկում
42. Պատժի իրականացումը փակ ուղղիչ հիմնարկում
43. Պատժի իրականացումը բուժական ուղղիչ հիմնարկում
44. Պատժի իրականացումը ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ
45. Կին և անչափահաս դատապարտյալների ազատազրկման կատարման առանձնահատկությունները
46. Պատժից ազատելը, նրա տեսակները
47. Պատժից ազատելու կարգն ու հիմքերը
48. Պատժից ազատվող անձանց օգնության ցուցաբերումը
49. Պատժից ազատված անձանց սոցիալական հարմարումը /ադապտացիան/
50. Պատժի հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կատարման կարգն ու պայմանները